1895—1896 ԹԹ. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐՈՒՄ

Պ. Ս. ՍԻՄՈՆՅԱՆ

1877—1878 ԹԹ. ռուս-թուրքական պատերազմից հետո սուլթանական կառավարության հակահայկական քաղաքականությունն ավելի ընդգծված, սուր բնույթ ստացավ։ Նկատի ունենալով պատերազմում Թուրքիայի տարածքային կորուստները, մեծ վեզիր Մահմեդ Քյամիլ փաշան նախանշում էր հայերի նկատմամբ կիրառվող քաղաքականության հիմնական սկզբունքները. «Խելոքությունը՝ ջնջել, վերացնելն է այն ամեն տարրերը, որ մի օր կարող են մեզ համար նույն վտանգը ծնել»[1]։ Մշակվեց ու գործի դրվեց արևմտահայության ֆիզիկական բնաջնջման հրեշավոր ծրագիրը։

Հայկական արյունալի սարսափների մասին սահմռկեցուցիչ լուրերը տարածվեցին Եվրոպայում։ Փոթորկվեց հասարակական միտքը, սակայն մեծ տերություններից յուրաքանչյուրը ձգտում էր Հայկական հարցում ձևավորվող իր երկրի կարծիքը օգտագործելով ճնշում գործադրել Թուրքիայի վրա և հօգուտ իր տերության սուլթանից կորզել շահավետ արտոնություններ։ Հայկական հարցը դառնում էր մեծ տերությունների շահարկման առարկա։ Նրանց դիվանագիտական ալեբախումների ընթացքում թուրքական կառավարությունը, օգտվելով տերությունների միջև եղած հակամարտություններից, կեղծ խոստումներ էր տալիս, հայաբնակ շրջաններում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ մտացածին հայտարարություններ էր անում և, ժամանակ շահելով, ամբողջ երկրով մեկ բարձրացնում էր հակահայ հիստերիա, բորբոքում էր մահմեդական ազգաբնակչության կրոնական վայրի ֆանատիզմը ու կոտորում արևմտահայությանը՝ աշխատելով Հայկական հարցը թուրքական ձևով լուծել. գոյություն չունի ժողովուրդ, չկա հիմնահարց։

Արևմտահայության զանգվածային ջարդերը կատարվեցին 1894 թ. հուլիս-օգոստոսին Սասունում, ապա 1895—1896 ԹԹ. Արևմտյան Հայաստանի այլ ու թուրքական կայսրության բոլոր հայաբնակ վայրերում։

Ջարդերից մազապուրծ հայ հազարավոր գաղթականներ անցան Անդրկովկաս և Հարավային Ռուսաստան՝ գտնելով ապաստան, ստանալով ռուս ժողովրդի, արևելահայության և այլ ժողովուրդների նյութական ու բարոյական օգնությունը։

Հայ գաղթականների, և ընդհանրապես արևմտահայության խնդրում Ռուսաստանում ինչպես իշխանության վերին ոլորտներում, այնպես էլ ժողովրդական լայն զանգվածների մեջ միանշանակ դիրքորոշում գոյություն չուներ։

XIX դ. 90-ական ԹԹ. ռուսական ցարիզմը առաջնորդվելով իր արտաքին ռազմաքաղաքական շահերով, Թուրքիայի նկատմամբ վարած իր ավանդական՝ նրա տարածքի բաժանման քաղաքականությունից առերես հրաժարվել էր ու այդ խնդրում բռնել էր զգուշավոր դիրք, իսկ Հայկական հարցում փոխել էր իր վերաբերմունքը։ Մի կողմից ցարիզմը չէր ցանկանում կորցնել թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների՝ դեպի Ռուսաստանն ունեցած հավատն ու ակնկալությունները, իսկ մյուս կողմից՝ երկրում սըր-

1 Փորձ, 1879, № 7—8, էջ 204—205։

վող սոցիալական ու ազգային-ազատագրական շարժումները. ինչպես նաև Մերձավոր ու Միջին արևելքում արտաքին քաղաքականության բնագավառում ստեղծված անբարենպաստ իրադրությունը նրան ստիպում էին չտրել Հայկական հարցը։

Անկախ քննվող ժամանակաշրջանում Հայկական հարցում ցարիզմի որդեգրած նոր ուղղությունից՝ կառավարությունը, արքունիքը, իշխանական ընտանիքների առանձին ներկայացուցիչները, բարձրաստիճան չինովնիկները, անգամ ցարական բյուրոկրատական ապարատի ծառայողները, ռուս ժողովրդի առաջադեմ մտածողները, ժողովրդական լայն զանգվածները նյութական, բարոյական օգնություն ցույց տվեցին, սատար եղան հայ գաղթականությանը։ Այնուամենայնիվ, կառավարության հակահայ կողմնորոշումը և այդ խնդրում նրա պրոպագանդը իրենց սև գործն առեցին։ Ռուս ժողովրդի որոշ սոցիալական խմբեր ենթարկվեցին այդ ընթացքին ու ընդգծված թշնամանքով էին վերաբերվում հայ գաղթականներին. «ինչ-որ հայերի համար պետք չէ, որ թշնամանք մեր հարևան Թուրքիայի հետ»[2],— կարծում էին նրանք։

Ցարիզմի հակահայ քաղաքականության հետադիմական սկզբունքները պաշտպանում ու պրոպագանդում էին ինքնակալությանը հավատարիմ «Նովոյե վրեմյա», «Մոսկովսկիե վեդեմոստի», «Գրաժդանին», «Կրեմլ», «Պրավիտելստվեննի վեստնիկ» պաշտոնական ու կիսապաշտոնական, ինչպես նաև դրանց հետևող մյուս պարբերականները։

Պաշտպանելով ցարիզմի մերձավորարևելյան քաղաքականությունը, այդ լրագրերի շուրջ համախմբված խավարամիտ, հետադեմ գործիչները փորձում էին ապակողմնորոշել ռուսական հասարակությանը։ Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները ներկայացնում էին կեղծված, ստահոդ տեղեկություններ հրապարակում հայ ազգային-ազատագրական շարժումների վերաբերյալ, պաշտպանում արյունարբու սուլթան Աբդուլ Համիդին և մեղավոր ճանաչում հայերին[3]։

Պաշտոնական մամուլը, պաշտպանելով Մերձավոր արևելքում ցարիզմի որդեգրած քաղաքական նոր ուղղությունը, քննադատելով Մերձավոր արևելքում Անգլիայի վարած շահամետ քաղաքականությունը, ռուս-անգլիական հակամարտությունները բացատրում էին ոչ թե այդ երկու տերությունների՝ Արևելքում ունեցած շահերով ու ռազմաքաղաքական նպատակներով, այլ՝ Հայկական հարցով։ Ըստ նրանց, Հայկական հարցը թուրքական բռնակալության դեմ արևմտահայության արդարացի, ազատագրական պայքարի օրինաչափ հետևանքը չէր, այլ իբր, բարձրացվել էր Անգլիայի կողմից՝ Անդրկովկասի հարևանությամբ Ռուսաստանի դեմ պայքարի հենակետ ստեղծելու նպատակով։ Հետևաբար, արևմտահայությունը իբր թե թուրքական լծից ազատագրության հարցում կողմնորոշվելով դեպի Անգլիան, Ռուսաստանի՝ Փոքր Ասիա շարժման ճանապարհին դառնում էր բնական արգելք։ Նման մտայնությամբ ցարական հետադեմ գործիչներն աշխատում էին թշնամանք հարուցել հայ ժողովրդի դեմ[4]։ Մյուս կողմից Հայկական հարցում ցարիզմի որդեգրած կողմնորոշումը փորձում էին «հիմնավորել» նրանով, որ Ռուսաստանը 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հազարավոր զինվորների կյանքի գնով ազատագրեց Բուլղարիան, սակայն շահեց ազատագրված Բուլղարիայի թշնամանքը, երբ վերջինս կողմնորոշվելով դեպի Արևմուտք՝ փակեց Ռուսաստանի առաջընթացը Բալկանների վրայով դեպի սևծովյան նեղուցներ[5]։ Պաշտոնական շրջաններն աշ-

---

[2] Новое время, 1896, № 175.

[3] Исторический вестник, 1912, № 6, с. 917.

[4] Новое время, 1895, № 215; Гражданин, 1895, № 106.

[5] Московские ведомости, 1896, № 254.

խատում էին վարագուրել այն ճշմարտությունը, որ բուլղարական հարցում ցարիզմի քաղաքականության ձախողումն արդյունք էր Ալեքսանդր III-ի կարճամիտ ու ապաշնորհ արտաքին քաղաքականության։

Կային, իհարկե, նաև ցարական դիվանագետներ, որոնք խորհուրդ էին տալիս կառավարությանը՝ մամուլին՝ թույլ չտալ թշնամանքով արտահայտվել Հայկական հարցում, գտնելով, որ դրանով հայերին կմղեն դեպի Անգլիան։ Ավելին, նրանք կարծում էին, որ պետք է շարունակել ավանդական բարեկամությունը հայերի հետ։ Սակայն հեռատես դիվանագետների այդ կարծիքը կառավարական ոլորտներում 1890-ական թվականներին արձագանք չգտավ։ Ավելին, ցարիզմի արտաքին քաղաքականությանը հավատարիմ գործիչները կառավարությանն առաջարկում էին թույլ չտալ ռուսական թերթերում ջերմ տողեր դրել Հայկական հարցի մասին ընդհանրապես և մասնավորապես Թուրքիայից փախած գաղթականների մասին[7]։

Ի հակադրություն ցարական կառավարական շրջանների ու պաշտոնական հետադիմական մամուլի այդ վարքագծի, ռուս ամենալայն ժողովրդական-դեմոկրատական խավերի համակրանքը հայ ժողովրդի կողմն էր, և նրանք իրենց եղբայրական օգնության ձեռքն էին մեկնում արևմտահայերին՝ նրանց փրկելու համիդյան արյունալի սպանդից։ Ռուսական լայն հասարակության ուշադրությունը Հայկական հարցի վրա գամելու նպատակով ռուս առաջադեմ գործիչները, մտավորականության նշանավոր ներկայացուցիչները կազմակերպում էին հավաքույթներ, հայ-ռուսական ընկերություններ, հայոց պատմությանը, գրականությանն ու արվեստին նվիրված դասախոսություններ, նվիրատվություններ՝ արևմտահայության օգնության հիմնադրամին, թերթերում ու ամսագրերում առաջադեմ մտավորականները հրատարակում էին հրապարակախոսական հոդվածներ՝ ի պաշտպանություն հայ ժողովրդի։

Այնքան հզոր ու ազդու էր հօգուտ հայ ժողովրդի Ռուսաստանի առաջադեմ խավերի հնչեցրած ձայնը, որ նրա ազդեցության տակ նույնիսկ պաշտոնական մի շարք հրատարակություններ Հայկական հարցում սկսեցին հետևել ժողովրդական-դեմոկրատական խավերի որդեգրած կողմնորոշմանը։

Նման գործունեության բնորոշ օրինակ տվեց պաշտոնական հնամենի հրատարակություններից մեկը՝ «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը։ Նրա խմբագրի՝ գրականագետ և բանաստեղծ իշխան Է. Ուխտոմսկու անմիջական նախաձեռնությամբ նախանշվեց Հայկական հարցում լրագրի գործունեության ելակետը. «Մենք զուր տեղը չենք բարձրացնի մեր ձեռքը,—գրում էր Է. Ուխտոմսկին,—ռուսաց պետության մեջ մտնող երկրների ու ամբողջ պատմական կազմության և նրա մեջ ապրող այլադավան ու այլացեղ տարրերի վրա։ Մենք կհարգենք ու կպահպանենք այն, ինչ որ մայրենի է և վաղեմի»[8]։

Լրագրի շուրջ համախմբված առաջավոր հրապարակախոսներն իրենց ելույթներում ու հոդվածներում անկողմնակալ պարզաբանում էին Հայկական հարցի իսկական էությունը, ռուս ժողովրդին կոչ անում օգնության ձեռք մեկնել, սատար լինել տարաբախտ հայերին, մերկացնող քննադատության էին ենթարկում պաշտոնական շրջանների կողմից հայ ժողովրդի դեմ կատարվող անարդար հարձակումները, ձգտում էին այդ հարցում ռուս հասարակության կարծիքը դնել ճիշտ ուղու վրա։

Մեկ այլ պաշտոնական թերթ՝ «Պրավիտելստվենն վեստնիկը», ստիպված էր մեղմացնել իր տոնը Հայկական հարցում։ Առանձնահատուկ ուշադրության է արժանի նրանում տպագրված «Հայաստանը և նրա նկատմամբ ռուս ժողովրդի վերաբերմունքը» հոդվածը, որում փաստական տվյալներով

6 ՀՀ պետական կենտրոնական պատմական արխիվ, քաղվածքների ֆ., ց. 1, գ. 34, թ. 23։

7 Архив внешней политики России (այսուհետև՝ АВПР), ф. «Политархив», д. 3449, лл. 271—272.

8 С. Петербургские ведомости, 1896, № 14.

մեկնաբանված են հայ և ռուս ժողովուրդների բազմադարյան բարեկամության հանդամանքները, ինչպես նաև ցույց է տրված թուրքական կառավարության հակահայկական քաղաքականության էությունը։ Հոդվածագիրն իրավացիորեն ընդգծում է այն միտքը, որ հայկական կոտորածները թուրքական կառավարության կողմից գործադրվել են դեռևս XVII—XVIII դդ. և էլ ավելի դաժանությամբ XIX դ. վերջին քառորդում[9]։

Թուրքական իշխանությունները Մերձավոր արևելքում հատուկ շահեր ունեցող արևմտյան տերությունների պաշտոնական շրջանները ապաստողմնորոշող ստահոդ լուրեր էին տարածում, որ իբր կոտորածները տեղի են ունենում հայ հեղափոխականների մեղքով, որ հայերը կազմելով ազգաբնակչության չնչին փոքրամասնությունը, իրենք են նախահարձակ լինում՝ մահմեդական ազգաբնակչությանը պատճառելով մարդկային մեծ զոհեր, և որ կոտորածները կատարվում են ոչ թե կառավարության, այլ մահմեդական մոլեռանդ ամբոխի ձեռքով[10]։

Ցարական պաշտոնական և կիսապաշտոնական մի շարք պարբերականներ, բյուրոկրատիայի հետադեմ գործիչներ, դիվանագետներ ու որոշ զինվորականներ նույնությամբ կրկնում էին վերը նշված հակահայկական կեղծ վարկածները[11], նպատակ ունենալով արդարացնել ցարիզմի արտաքին ագրեսիվ քաղաքականությունը։

Ռուս նշանավոր հրապարակախոսներ Վլ. Գոլմստոեմը, Ս. Սաղչինովը, Գամման, Սիգման և Նոտովիչը հանդես եկան հայ ժողովրդի դեմ ուղղված նման անհիմն ու զրպարտիչ մեղադրանքների քննադատությամբ, օգնեցին ռուսական հասարակայնության լայն խավերին՝ ճիշտ հասկանալու Հայկական հարցի բովանդակությունը և ընկալելու ցարիզմի՝ դեպի հայ ժողովուրդը ցուցաբերած մոտեցման շարժառիթները։

Վլ. Գոլմստրեմը «Հայ փախստականները», «Հայ որբերը», «Քարեռն էլ կաղաղակեն», «Կրկին հայերի մասին», «Ողբայր հայեր», «Խաչվածները» և կրակոտ լեզվով գրված այլ հայասիրական հրապարակախոսական հոդվածներով խարազանող քննադատության էր ենթարկում պաշտոնական ու կիսապաշտոնական լրագրերի շուրջ համախմբված այն գրչակներին, որոնք հատուկ շահադիտական նպատակներով հակահայկական կրքեր էին բորբոքում[12]։ Ծանոթանալով Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող սարսռակեցուցիչ[13] իրադարձություններին, հրապարակախոսը իր կոչումը դարձրեց ռուս ժողովրդի ուշադրությունը հայ ժողովրդի ողբերգական գրության վրա բևեռելու գործը, ռուս մարդկանց հոգում կարեկցանքի ու օգնության պատրաստակամության զգացում առաջացնելը[14]։

«Ռուս ընթերցող,—գրում էր նա,—քո ձայնը անհրաժեշտ է, քանի որ մեր բոլորի ձայնը միասին կազմում են հասարակական կարծիքը, Ռուսաստանի ձայնը, որը կեղծ չպետք է հնչի։ Քո համագործակցությունը անհրաժեշտ է ոչ միայն հայերին նյութական օգնություն ցույց տալու համար, այլև Ռուսաստանի հասարակական կարծիքը կեղծ ուղուց շրջելու դեպի ճշմարիտը»[15]։ Վլ. Գոլմստրեմը քննադատելով Հայկական հարցում «Մոսկովսկիե վեդոմոստիի», «Նովոյե վրեմյայի» բռնած դիրքը (հատկապես այն դրույթը, թե իբր հայկական ջարդերը «Ռուսաստանի ընդհանուր շահերի հետ

---

9 Правительственный вестник, 1895, № 189.

10 Московские ведомости, 1896, № 178.

11 АВПР, ф. «Политархив», д. 3440, лл. 5—23.

12 С. Петербургские ведомости, 1896, № 7.

13 Նույն տեղում։

14 Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1896, с. 3.

15 Նույն տեղում։

չեն առնչվում» և դրանք Թուրքիայի ներքին գործն են)[16], նկատում էր, որ հայերի կոտորածը բացառապես ուղղված է Ռուսաստանի դեմ[17], և հայերին իրական օգնություն կարող է ցույց տալ միայն Ռուսաստանը[18]։ Նա անխնա հարվածում էր այն լրագրողներին, որոնք հատուկ քաղաքական շահերով ոգեշնչված, կեղծում էին հայ ժողովրդի պատմությունը։ Վլ. Գոլմստրեմը դրվատելով հայ ժողովրդի պատմության, լեզվի և հատկապես ճարտարապետական կոթողների ուսումնասիրման ասպարեզում Ն. Մառի արժեքավոր գործունեությունը, «Քարերն անգամ կաղաղակեն» հոդվածում նշում էր, որ դրանք բոլորը պատմական փաստեր են[19]։

Պաշտոնական մամուլի կողմից հայ ժողովրդի դեմ կազմակերպված հարձակումների քննադատությամբ հանդես եկավ «Ռուսսկայա միսլ» ամսագիրը։ Հակադրվելով ցարական հետադեմ շրջանների հակահայկական վերաբերմունքին, հրապարակախոս Ա. Սազոնովը գրում էր. «Հայ ժողովրդին չպետք է բնորոշել ժողովրդական օրգանիզմից կտրված, ինքնապաշտպանության հաշվենկատությամբ գործող առևտրականների ամբոխով, այլ պետք է տեսնել հողագործությամբ զբաղվող հայ հողագործին՝ համակրելի արտաքինով, քրտինքը դեմքին, անխոնջ աշխատանքով»[20]։

Միաժամանակ, իրավացիորեն, կեղծ ու ստահոդ էին դիտվում ցարիզմի ու նրա ձայնափող խավարամիտ լրագրողների կողմից արևմտահայության համար թուրքական կառավարության ստեղծած «ապրելու իդեալական պայմանների», ինչպես նաև «ազնիվ» քրդերի՝ հայերի դեմ «արդարացի» գործողությունների մասին եղած հայտարարությունները[21]։ Նրանք հայկական զանգվածային ջարդերի իսկական հանցավոր էին ճանաչում արյունարբու սուլթանի կառավարությանն ու արևմտյան մեծ տերություններին, որոնք Մերձավոր արևելքում ունենալով ռազմաքաղաքական ու տնտեսական շահեր, հովանավորում և աջակցում էին ջարդարար սուլթանին։ «Այդ (հայկական կոտորածները—Պ. Ս.) կընկնի բացառապես ժամանակակից դիվանագիտության խղճի վրա»[22],— շեշտում էր «Ռուսսկայա միսլը»։

Հակառակ պաշտոնական շրջանների այն մտայնությանը, թե իբր թուրքական կառավարության դեմ հայերն են առաջինը զենք բարձրացրել[23], հետևաբար սուլթանի օրինական իրավունքն է ցանկացած միջոցներով ճնշել իր հպատակների ընդվզումը և երկրում վերականգնել կարգը[24], հրապարակախոս Ա. Սազոնովը գրում էր. «Ինչու հայերին հանցավոր համարել այն բանի համար, որ նրանք էլ ուրիշների նման պահանջում են գոյության իրավունք ... Ինչո՞ւ մեղադրենք նրանց, երբ տեսնելով իրենց անխուսափելի կործանումը, միևնույն է՝ մնան սուլթանին հնազանդ, թե ապստամբեն, նախամեծար են համարում մեռնել զենքը ձեռքին, քան անտարբեր հանդիսատես լինել, թե ինչպես ջարդում ու ոչնչացնում են այն ամենը, ինչ մարդու համար աշխարհում թանկ է ու նվիրական»[25]։

Արևմտահայության զանգվածային կորուստներն անհուն վշտով ու կարեկցանքով էր ներկայացնում լիբերալ գաղափարների հետևորդ «Մեր

---

16 Новое время, 1896, № 275.

17 Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1896, с. 4.

18 С. Петербургские ведомости, 1896, № 362.

19 Նույն տեղում։

20 А. Н. Сазонов, Европа и Турция в Армянском вопросе (Русская мысль, 1896, кн. 11, с. 112).

21 Նույն տեղում, էջ 109։

22 Նույն տեղում։

23 АВПР, ф. «Политархив», д. 3448, лл. 56—70.

24 Гражданин, 1895, № 192.

25 Русская мысль, 1897, кн. 10, с. 75.

բոժի» ամսագիրը։ «Տղամարդիկ, կանայք, ծերերը անխնա կերպով ոչընչացված էին ... Եվ կարելի էր կարծել, որ հրաման էր տրված կոտորել այդ շրջանի բոլոր հայերին։ Տարաբախտ հայերը ուր էլ որ հառում էին իրենց հայացքը, ամենուրեք տեսնում էին միայն անողորմ դահիճների, բայց ոչ մի տեղ չէին գտնում ո՛չ հովանավոր, ո՛չ արդար դատավոր»[26]։

Արձագանքելով հայկական կոտորածներին, «Ռուսսկայա միսլը» նշում էր. «Մանր ժառանգություն թողեց Եվրոպային անցած 1896 թվականը։ Թուրքական գազանությունները կայսրության քրիստոնյա բնակչության և հատկապես հայերի նկատմամբ հուզեցին ու զայրացրին քաղաքակիրթ աշխարհին»[27]։

Միանգամայն ճշմարտացի էին ռուս առաջադեմ մտավորականները, որ 1890-ական թվականների կոտորածները ոչ թե թուրքական կառավարության դեմ հայերի «անհնազանդության» հետևանքով էին կատարվում, այլ տեղի էին ունենում Բ. Դռան կողմից հայ ազգը բնաջնջելու, իսպառ վերացնելու «թուրքական եղանակով», Հայկական հարցը մեկընդմիշտ «լուծելու» նպատակով։ Հետևողականորեն արդարացնելով արևմտահայության ազգային-ազատագրական շարժումները, ռուս առաջավոր մտածողները սպանիչ քննադատության էին ենթարկում ցարական պաշտոնական շրջանների այն մտայնությունը, թե իբր սուլթանը, որպես երկրի գերագույն կառավարիչ, իրավասու է բոլոր միջոցներով ճնշելու իր «հպատակների խռովությունները և երկրում վերականգնելու օրինականությունը»[28]։

«Ռուսսկայա միսլը» իրավացիորեն ընդգծում էր հայ ժողովրդի ու նրա ազատագրական շարժման նկատմամբ ռուս ժողովրդի բարոյական վերաբերմունքի ձևավորման հարցում ռուսական մամուլի մեծ դերը։ «Ռուսական մամուլի պարտքն է բոլոր ազգերի ու ժողովուրդների կողմից ռուս մեծ ժողովրդի հանդեպ ունեցած հարգանքի ու համակրանքի տարածումը,— գրում է հանդեսը,— և ռուսական գործին ու ռուսական անվանը բարի ծառայություն չեն մատուցում այն լրագրերն ու ամսագրերը, որոնց սյունակներից չեն իջնում հայերի նկատմամբ անմիտ ամբարտավանության ու անհեռատես չարակամության խոսքերը»[29]։

Ռուս ընթերցողին ներկայացնելով Արևմտյան Հայաստանում ծավալվող արյունալի իրադարձությունների մանրամասները, թերթը մերկացնում էր թուրքական իշխանությունների ստահոդ հայտարարությունները «Հայերի անկարգությունների» վերաբերյալ[30]։

Հայ ժողովրդին անարդարացի հարձակումներից պաշտպանելու «Ռուսսկայա միսլի» ձգտումներին արձագանքում էր «Նեդելյա» շաբաթաթերթը։ Քննադատելով մեծապետական շովինիզմի գաղափարները, «Գերված ժողովուրդը» հոդվածի հեղինակը ռուս ընթերցողին էր ներկայացնում հարուստ պատմական անցյալ ու զարգացած մշակույթ ունցող, սակայն թուրքական գազանությունների հետևանքով բնաջնջման եզրին հասած հայ ժողովրդին, ձգտելով ռուս ժողովրդի մեջ նրա նկատմամբ առաջացնել մարդասիրական վեհ զգացում. «Այն ժամանակ, երբ թուրքերի անտանելի լծի տակ գտնվող բոլոր քրիստոնյաները՝ սերբերը, հույները, բուլղարները, մեկը մյուսի հետևից ստացան ազատ ազգային գոյության իրավունք, միայն դժբախտ հայերն էին զրկված այդ տարրական բարօրությունից։ Նրանք դեռևս ասիական հորդայի գերիշխանության տակ են։ Բայց նրանք նույնպիսի քրիստոնյաներ էին,— շարունակում էր թերթը,— ինչպես և մենք, հավատում են

---

26 Мир божий, 1896, № 1, с. 233.

27 Русская мысль, 1896, кн. 1, с. 151.

28 Новое время, 1896, № 220.

29 Правительственный вестник, 1896, № 175.

30 А. А. Горенко, Об армянах (Сибирский вестник, 1897, № 17).

նույն Աստծուն և եղբայրությանը, նույնպես իրավունք ունեն արժանանալու քրիստոնեական աշխարհի կարեկցանքին, ինչպես հույները, սերբերը, բուլղարները, ինչպես իր ազատությունը կորցրած յուրաքանչյուր ժողովուրդ։ Հայ ժողովուրդը քրիստոնեության սկզբունքներով է դաստիարակվում ոչ պակաս ժամանակ, քան մյուս քրիստոնյաները։ Օվ ահա այդ ժողովուրդը դատապարտված է ենթարկվել բարբարոսական և հրեշավոր գազանությունների առջև կանգ չառնող կույրս մահմեդական իշխանության»[31]։

Հեղինակը սեփնարանելով Թուրքիայում տեղի ունեցած կոտորածների մանրամասները, արդարացի վայրույթով բացականչում է. «Ինչպե՞ս կարող է քրիստոնյա աշխարհը հանդուրժել այդ ստրկությունը։ Ինչպես կարող են հզոր տերությունները դանդաղել իրենց կամքը թելադրելու կիսամեռած Թուրքիային, նրա ճիրաններից ազատագրելու հայերին։ Մի՞թե քաղաքականության մեջ դոյություն չունի բարոյական պարտք»[32]։

Քննադատելով արևմտյան մեծ տերությունների՝ Հայկական հարցում հանդես բերած դիրքորոշումը, հոդվածագիրը իրավացիորեն նշում է. «Ցավոք սրտի, բոլոր երկրներում պարզ և հստակ դիտակցություն միթադնու... են շովինիստների և զայ-հայրենասերների ձայները, որոնք հայերի ա...թով դատողություններ են անում իրենց երկրի «հեղինակության», «իր...վունքների» և «առավելությունների» մասին։ Ցավոք,— շարունակում էր նա,— երբեմն ռուսական մամուլն էլ զերծ չի մնում այդ նեղ պոլիտիկանությունից, գրեթե հասնելով Հայկական հարցի անձեռնմխելիությունը և «Թուրքիայի իրավունքները» պաշտպանելու մասին կառավարությանը խորհուրդներ տալիս»[33]։ Պատմական զուգահեռ անցկացնելով Ռուսիայի վրա XIII—XV դդ. ծանրացած մոնղոլ-թաթարական լծի մռայլ ժամանակաշրջանի և արևմտահայության վրա թուրքական բարբարոսական տիրապետության միջև, հեղինակը ռուս ժողովրդի, ինչպես նաև իրենց նեղ սեփական շահերով ղեկավարվող կառավարական ոլորտների ուշադրությունն է հրավիրում թուրքական գազանությունների վրա, հայ ժողովրդի ազատագրական շարժումները դիտում է որպես թուրքական հալածանքների օրինաչափ հետևանք, իսկ ազատության ձգտումը՝ ինչպես մյուս ժողովուրդների, այնպես էլ արևմտահայության բնական իրավունքը։ «Արժե միայն հիշել,— գրում էր հոդվածագիրը,— որ Ռուսաստանը ինքը միայն 400 տարի է, ինչ դուրս է եկել ասիական լծի տակից և որքան անտանելի էր այդ լուծը։ Մենք չպետք է անտարբեր մնանք այժմ, երբ թուրքերի լծի տակ մնացել են մի բուռ քրիստոնյաներ։ Պե՞տք է արդյոք զարմանալ, որ երկրում ծավալվել է հայրենասիրական շարժում։ Մի՞թե քրիստոնյա եղբայրները կարող են հայերին դատապարտել բարօրության ձգտելու համար, որ բոլոր ժողովուրդները համարում են սրբություն։ Եթե ռուսի համար իր ազգային ազատությունը պաշտպանելը համարվում է սուրբ պարտականություն, ապա կարելի՞ է այդ նույն ձգտման համար պարսավել հայերին»[34]։ Հեղինակը իրավացի էր, երբ ամբողջ զայրույթը ուղղելով արևմտյան տերությունների շահադիտական քաղաքականության դեմ, հայկական կոտորածները համարում էր նրանց գործունեության արդյունք։ Նա գտնում էր, որ Ռուսաստանը կարող է և պետք է ակտիվ գործողություններ ձեռնարկի կոտորածներին վերջ դնելու և դարավոր ստրկական գերության մեջ գտնվող հայերին ազատագրելու համար[35]։

---

31 Неделя, 1895, № 41.

32 Նույն տեղում։

33 Նույն տեղում։

34 П. К. Жузе, Положение христиан в мусульманских государствах. Казань, 1897, с. 7.

35 С. Петербургские ведомости, 1895, № 18.

Մահմեդական ծովում ապրող հայ ժողովուրդն իր ազատագրության հույսը իրավացիորեն կապում էր Ռուսաստանի հետ, քանի որ վերջինս որդեգրել էր թուրքական լծից քրիստոնյաների ազատագրության մեծ դերը, որ «պետք է զարդարի ռուսական պատմությունը»[36]։

Արևմտյան Հայաստանում սուլթանական կառավարության կողմից իրագործվող հալածիչ քաղաքականության էությունը, ինչպես նաև Թուրքիայում և Մերձավոր արևելքում հատուկ շահեր հետապնդող եվրոպական տերությունների գործելակերպը բազմակողմանի քննադատության է ենթարկում «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը։ Մանրամասն նկարագրելով Արևմտյան Հայաստանում, հատկապես Սասունում հայ ազգաբնակչության ահավոր ջարդերը 1894 թ., նա ձգտում էր ռուսական հասարակության լայն խավերին հակակրանք ներշնչել ընդդեմ թուրքական կառավարության, իսկ անզեն և անպաշտպան արևմտահայության հանդեպ՝ հոգատարություն և համակրանք[37]։

Մերկացնելով թուրքական կառավարության կեղծ հայտարարությունը, թե իբր հայերը խռովություն են բարձրացրել իր դեմ և որ ընդհարման ժամանակ ավելի շատ մահմեդականներ են կոտորվել, քան հայեր, թերթը հավաստում է, որ Սասունում կոտորածների հետևանքով զոհվել է 10 հազար հայ։ Տասնյակ հայկական գյուղեր վերածվել են մոխրակույտերի[38]։

«Տիֆլիսկի լիստոկ» թերթը թուրքական իշխանություններին մեղադրելով հայերի նկատմամբ կատարած դաժանությունների համար, նշում էր, որ անհնար է առանց հոգեկան ցնցման հիշել կիսալուսնի զավակների անմարդկային, հիրավի գազանային «սխրագործությունները»[39], ընդգծում, որ Սասունում ոչ մի խռովություն էլ չի եղել, հայերին կոտորել են առանց որևէ պատճառի[40]։

Սասունի ջարդերի մասին մանրամասն տեղեկություններ են տալիս նաև «Նովոստի» «Մշակ», «Նեդելյա» լրագրերը։ Այդ առիթով «Նովոյե Օբոզրենիե» գրում է. «Բ. Դուռը Եվրոպայի մայրաքաղաքների բոլոր թուրքական դեսպանություններին ուղարկել է «պարզաբանումներ», որ ոչ թե թուրքական զորքերն են կոտորել Սասունի բնակչությանը, այլ հայ ավազակներն են վայրագություններ կատարել և այրել մուսուլմանական գյուղերը»[41]։

Այդ կերպ թուրքական իշխանությունները ձգտում էին սքողել սուլթանական կառավարության սանձազերծած կոտորածները, մեղքը բարդել հայերի վրա, ապակողմնորոշել համաշխարհային կարծիքը, որը խիստ ալեկոծվել էր անգլիական թերթերում կոտորածների մանրամասնությունների հրապարակման հետևանքով։

Արդարացի էին ռուս առաջադեմ գործիչների պնդումները, թե հայկական զանգվածային կոտորածները՝ «բռնությունները, խոշտանգումները, քրիստոնյա ռայայի չդադարող կողոպուտը վաղուց դարձել էին թուրքական վարչության համար ամուր հաստատված համընդհանուր գործելակերպ»[42]։

Թուրքական կառավարության հակահայկական քաղաքականությունը նշավակել է գրականագետ Վ. Միխնևիչը։ Նա 1896 թ. «Նովոստի» լրագրում տպագրած «Հայկական հեծեծանքները և դրանց արտահայտիչները» հոդվածում զարգացնում է այն միտքը, թե Թուրքիայում հայկական կոտորածները կրկնվում են պարբերաբար։ Կառավարությունն այդ կոտորածները կատարում է հատուկ նպատակով[43]։ Հեղինակը խարազանող քննադատու-

36 Նույն տեղում, № 39։
37 Тифлисский листок, 1895, № 32.
38 Նույն տեղում։
39 Նույն տեղում։
40 Новое обозрение, 1894, № 3679.
41 Русское богатство, 1897, кн. 11, с. 45.
42 Новости.
43 Новости, 1896, № 45.

թյան է ենթարկում ռուսական հետադիմական մամուլի կողմից հայերի դեմ անտեղի հարձակումները, ընդգծում այն գաղափարը, որ գաղթական հայերին օգնություն ցույց տալը ռուս ժողովրդի սրբազան պարտքն է[44]։

«Պատմական պատգամները ռուս ժողովրդին թույլ չեն տալիս անտարբեր մնալ քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ գործադրվող բռնությունների հանդեպ»—ընդգծում էր «Բիրժեվիե վեդոմոստի» լրագիրը[45]։

Սասունում և Բիթլիսում տեղի ունեցած կոտորածների համար «Լուչը» իրավացիորեն մեղադրում է թուրքական իշխանություններին, որոնք «բազմաթիվ հարյուրամյակներ կոտորել են քրիստոնյաներին. նրանք չդիտեին իրենց ենթակա բնակչության հպատակեցման այլ եղանակ։ Թուրքերը միայն կոտորում էին ...»[46]։

Սասունում տեղի ունեցած կոտորածներից հետո Պետերբուրգում թուրքական դեսպանը, ձգտելով մոլորության մեջ գցել ռուսական հասարակական կարծիքը, իր արած հայտարարության մեջ նշում էր, թե իբր Սասունում կոտորած չի եղել, այլ եղել է հայերի և քրդերի մեջ ընդհարում, որ «գազանություններ են տեղի ունեցել հայերի կողմից»[47]։ Այդ և մյուս ստապատիր, իրական հիմքից զուրկ հայտարարությունները հերքեց «Նովոստի» լրագիրը[48]։

«Վնստնիկ Եվրոպի» ամսագիրը, ծաղրի ենթարկելով հայերին մեղադրելու, նրանց կոտորածների սկզբնապատճառ համարելու և թուրքական ու բրդական ջարդարարներին արդարացնելու թուրքական իշխանությունների ձգտումը[49], հանգամանորեն պարզաբանում էր Բ. Դռան կողմից հայ ժողովրդի դեմ ուղղված ջարդարարական քաղաքականության հետին նպատակները՝ մոլորեցնել հասարակական կարծիքը, կոտորել հայերին՝ լուռ, առանց աղմուկի[50]։ Կոտորել ու չքմեղ ձևանալ, շեղել հասարակական կարծիքը ճիշտ ուղուց. ահա սա է թուրքական իշխանությունների գործելակերպը Հայկական հարցում։ «Թուրքական կառավարությունն ամեն անգամ,—նշում էր «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստին»,—երբ կայսրության մեջ տեղի են ունենում դյուգանություններ ու կոտորածներ, ամբողջ մեղքը գցում է չարաբաստիկ Հայկական հարցի և հայ հեղափոխականների ագիտացիայի վրա, որոնք սնուցիչն իբր անգլիացիների սադրանքներն էին։ Միաժամանակ,—շարունակում է լրագիրը,—թուրքական կառավարությունը ճգնում է Եվրոպային համոզել, որ այսպես կոչված «հայ հեղափոխականները» ոչ այլ ինչ են, եթե ոչ կոսմոպոլիտ անարխիստներ, կարգ ու կանոնի, օրինականության և քաղաքակրթության երդվյալ թշնամիներ»[51]։ Մերկացնելով թուրքական կառավարության հայահալած քաղաքականությունը և բնութագրելով հայ ժողովրդի ազատաբաղձ ոգին ու ազատագրական ընդվզումները, հոդվածագիրը, նկատի ունենալով հայ հեղափոխականներին, գրում է. «Կասկածից վեր է այն, որ դրանք թուրքական ռեժիմից հուսահատության հասած, ծնողներից, կանանցից, քույրերից զրկված մարդիկ են, որոնք այրվում են անգթորեն կոտորված ծնողների, եղբայրների, հարեմներում տանջվող պատվազրկված հարսների համար վրեժխնդիր լինելու բուռն ցանկությամբ։ Թուրքահայաստանը ներկայումս լեցուն է նման հեղափոխականներով։ Դրանք հասարակ, անպրագետ, կրոնասեր գյուղացիներ են, որոնք գաղափար անգամ չունեն հեղափոխության և հեղափոխականների մասին»[52]։

---

44 Новости, 1896, № 45.

45 Биржевые ведомости, 1896, № 261.

46 Луч, 1895, № 88.

47 Новости, 1895, № 72.

48 Նույն տեղում։

49 Вестник Европы, 1896, кн. 2, с. 416.

50 Նույն տեղում։

51 С. Петербургские ведомости, 1897, № 244.

52 Նույն տեղում։

Անգեն հայ ժողովրդի նկատմամբ հաշվեհարդարի ու թուրքական գազանությունների խնդրին ծավալուն հոդվածներով անդրադարձավ «Բիրժևվիե վեդոմոստի» լրագիրը։ «Մենք մինչև այժմ լսել էինք թուրքերի գազանությունների մասին,—նշում էր թերթը,—Թուրքիան որոշել է հայերի զենքը շրջել հենց իրենց դեմ և հանդես է գալիս «Հայերի պատճառած գազանությունների մասին» մերկացումներով»[53]։

Անարգանքի սյունին գամելով արևմտահայության նկատմամբ գործադրվող թուրքական կառավարության չարդարարական քաղաքականությունը, ռուս առաջադեմ մտածողները քայլ առ քայլ մերկացնում էին այդ կոտորածների ընթացքում սուլթանի ու Բ. Դռան հետապնդած նպատակները։ «Թուրքական կառավարությունը իր առջև խնդիր է դրել բնաջնջել, ոչնչացնել հայերին,—գրում էր «Ռուսսկոյե սլովո» թերթը»[54]։

Նրա շուրջ համախմբված լրագրողները իրական փաստերի ճնշման տակ մատնացույց էին անում, որ բոլոր կոտորածներն ընթացել են կառավարության՝ նախօրոք կազմած ծրագրի համաձայն[55], նրա ցուցումով։ Կոտորածների ընթացքում գործողությունները սկսվում էին ու ավարտվում միաժամանակ[56], մահմեդականներին քրիստոնյաներից տարբերելու համար կոտորածից առաջ հայերի տների վրա պայմանական նշաններ էին արվում։ Մահմեդականները այդ ընթացքում կրում էին սպիտակ գլխաշոր[57]։

Ռուսական առաջադիմական մամուլի լրագրողները, ժխտելով թուրքական իշխանությունների կեղծ ու ստահոդ հայտարարությունները կոտորածների խնդրում հայերի մեղսակցության մասին, Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած արյունալի իրադարձությունները համարում էին թուրքական վարչակարգի գործելակերպ։ Թուրքական բարբարոս վարչակարգը և սուլթանի ռեժիմը նվաճված տարածքներում բնիկ ժողովուրդների հպատակեցումը կատարում էին մշտական կոտորածների սանձազերծման, ֆիզիկական բնաջնջման միջոցով, թշնամանքով էին վերաբերվում ամեն մի նորի, առաջադիմականի նկատմամբ, որը թեկուզ փոքր-ինչ խախտեր թուրքական դարավոր ավատական կարգերի սկզբունքները։ Այս տեսակետից էր դիտում սուլթան Համիդը կոտորածների ընթացքում մեծ տերությունների առաջարկած բարենորոգումները և ամեն միջոց օգտագործում՝ կանխելու դրանց գործադրումը։ Ուստի «կառավարման նման համակարգի պայմաններում բոլոր խոսակցությունները Թուրքիայում բարենորոգումների մասին՝ ըստ էության զուրկ են իմաստից»[58],—նշում էր «Վեստնիկ Եվրոպի» հանդեսը։

ОСВЕЩЕНИЕ АРМЯНСКИХ ПОГРОМОВ 1895—1896 ГГ. НА СТРАНИЦАХ РУССКОЙ ПЕЧАТИ

П. С. СИМОНЯН

Резюме

Армянские погромы 1895—1896 гг. нашли широкий отклик как в Европе, так и в России. Однако в России отношение как к резне армян, так и к Армянскому вопросу не было однозначным. В этот период антиармянская политика царизма находила поддержку и пропаган-

53 Биржевые ведомости, 1895, № 258.
54 Русское слово, 1896, № 226.
55 Ю. Казнбек, Современная Турция, Спб., 1897, с. 8.
56 С. Петербургские ведомости, 1897, № 142.
57 Биржевые ведомости, 1896, № 244.
58 Вестник Европы, 1896, кн. 2, с. 416.

дировалась в верных самодержавию «Новое время», «Московские ведомости», «Гражданин», «Кремль», «Правительственный вестник» и других официальных и полуофициальных изданиях. В противоположность этому «Новости», «Вестник Европы», «Биржевые ведомости», «Луч», «Санкт-Петербургские ведомости», «Русское слово», «Неделя», «Новое обозрение» и ряд других прогрессивных газет представляли действительную картину и причины резни армян, разоблачали варварскую политику турецкого правительства в отношении армян, критиковали антиармянскую позицию царизма в этот период. Это во многом помогло широким слоям русской общественности правильно понять сущность Армянского вопроса и встать на поддержку западных армян.